

Ց Ա Ն Կ

ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ-  
ԾՐԱԳՐԻ 2-Ի ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԿՈՐՍԱՆ-ԿՈՐՎԻԱՄ ԿՈՆՍՏՐՈՒԿՄԻՈՆ»  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԱՆԴԵՊ  
ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԵՆԹԱԿԱՊԱԼԱՌՈՒՆԵՐԻ

| NN<br>ը/կ | Կազմակերպության անվանումը | Պահանջի չափը |
|-----------|---------------------------|--------------|
| 1.        | «ԱԱԲ Պրոեկտ» ՍՊԸ          | 574 491 741  |
| 2.        | «Էս ընդ Էյ Մայնինգ» ՍՊԸ   | 253 504 102  |
| 3.        | «Դենտալ Իմպորտ» ՍՊԸ       | 233 815 923  |
| 4.        | «Սուարդի» ԲԸ Հ/Մ          | 219 559 596  |
| 5.        | «Միրադա» ՍՊԸ              | 192 064 443  |
| 6.        | «Կամուրջչին» ՓԲԸ          | 131 325 161  |
| 7.        | «Բետոնիկա» ՍՊԸ            | 115 501 315  |
| 8.        | «Շին Թրեյդ» ՍՊԸ           | 98 612 371   |
| 9.        | «Ապառաժ» ՍՊԸ              | 81 160 038   |
| 10.       | «ՄԼ Մայնինգ» ՍՊԸ          | 60 132 468   |
| 11.       | «Տնա-Շին Աշոտ» ՍՊԸ        | 50 613 970   |
| 12.       | «Աննա Ավետիսյան» ԱԶ       | 31 167 910   |
| 13.       | «Ռաֆայել» ՍՊԸ             | 29 053 320   |
| 14.       | «Կամա» ՍՊԸ                | 26 127 500   |
| 15.       | «Ժակչին» ՍՊԸ              | 21 953 199   |
| 16.       | «Ինքնաթափ» ՍՊԸ            | 19 297 200   |
| 17.       | «Բիզնես Ալտերնատիվ» ՍՊԸ   | 15 801 400   |
| 18.       | «Քաջ-Տրանս» ՍՊԸ           | 12 060 940   |
| 19.       | «Նաիրի ՃՇՇ» ԲԲԸ           | 11 781 702   |
| 20.       | «Դանոյան Յուրա» ԱԶ        | 7 407 000    |
| 21.       | «Գազիկ Երանոսյան» ԱԶ      | 6 712 500    |
| 22.       | «Ավետիք Սարգսյան» ԱԶ      | 3 469 534    |
| 23.       | «Բետպոռ» ՍՊԸ              | 2 625 480    |
| 24.       | «Քեյ դի էյ» ՍՊԸ           | 2 554 000    |
| 25.       | «Պյոտր Բլոխին» ԱԶ         | 2 210 000    |

|                 |                      |                      |
|-----------------|----------------------|----------------------|
| 26.             | «Արարատ Թորոսյան» ԱԶ | 2 164 000            |
| 27.             | «Պատվական Ասոյան» ԱԶ | 969 500              |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b> |                      | <b>2 206 136 313</b> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ԴԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

**Բյուջետային վարկի տրամադրման պայմանագիր  
(Նախագիծ)**

**ք. Երևան**

**[ամսաթիվ]**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ի դեմս Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության, ում անունից հանդես է գալիս ֆինանսների նախարար Ատոմ Զանջուղազյանը, այսուհետ՝ Կառավարություն, մի կողմից, և [...], ի դեմս վերջինիս տնօրեն [...], ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ Վարկառու մյուս կողմից,

Հաշվի առնելով, որ.

1. Վարկառուն [...]թ.-ին «Կորսան Կորվիամ Կոնստրուկցյոն Էս Ա» հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Կորսան-Կորվիամ Ընկերություն) հետ կնքել է [...] պայմանագիրը,
2. Համաձայն [...]թ.-ին դուրս է գրվել հաշիվ-ապրանքագիր, որոնց համար վերջինիս կողմից սահմանված կարգով Կորսան-Կորվիամ Ընկերության կողմից վճարում չի իրականացվել,
3. Վարկառու Կորսան-Կորվիամ Ընկերության հանդեպ ունի [...] ՀՀ դրամի չափով գույքային պահանջ: Տարակարծությունից խուսափելու համար կողմերը արձանագրում են, որ Կառավարությունը որևէ կերպով չի հաստատում, ընդունում, համաձայնում կամ հավանություն տալիս Պահանջի առկայությանը, դրա հիմքում ընկած Վարկառուի կամ Կորսան-Կորվիամ Ընկերության պարտավորությունների կատարմանը:

Ինչպես նաև, հիմք ընդունելով ՀՀ կառավարության կողմից [...]թ.-ին կայացված թիվ [...] որոշումը, որի համաձայն ՀՀ կառավարությունը որոշում է կայացրել Վարկառուին [...] ՀՀ դրամի չափով բյուջետային վարկ տրամադրելու վերաբերյալ,

Կողմերը կնքեցին սույն Բյուջետային վարկի տրամադրման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան.

- 1.1. Կառավարությունը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 10-րդ հոդվածի և ՀՀ Կառավարության կողմից [...]թ.-ին կայացված թիվ [...] որոշման հիման վրա Վարկառուին տրամադրում է [...] ՀՀ դրամի բյուջետային վարկ (այսուհետ՝ Վարկ) վերադարձվելիության, ժամկետայնության, արժեքավորման ու վճարովիության սկզբունքով:
- 1.2. Վարկառուն պարտավորվում է Վարկը և պայմանագրով սահմանված տոկոսագումարը վերադարձնել Կառավարությանը Պայմանագրի 2-րդ կետի համաձայն սահմանված կարգով հաշվարկված ժամկետում:
- 1.3. Վարկը Վարկառուին տրամադրվում է 0.01 տոկոս տարեկան տոկոսադրույքով:
- 1.4. որպես վարկային պարտավորության ապահովման միջոց ընդունել գրավը (այսուհետ՝ Գրավ), հաշվի առնելով, որ վարկի գումարը չի կարող գերազանցել գրավի գնահատված արժեքի 80 (ութսուն) տոկոսը, կամ բանկային երաշխիքը՝ բյուջետային վարկի ողջ գումարի և բյուջետային վարկի պայմանագրի ողջ ժամկետի ընթացքում հաշվեգրվող տոկոսագումարի չափով:
- 1.5. Կառավարությունը պարտավորվում է Վարկառուին տրամադրել Վարկը Պայմանագրի կնքումից հետո [----] ժամկետում Վարկառուին բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:
- 1.6. Վարկառուն պարտավորվում է ձեռնարկել բոլոր ողջամիտ անհրաժեշտ քայլերը Կորսան-Կորվիան ընկերությունից Պահանջի հիման վրա վճարում ստանալու համար:

## 2. Վարկի տրամադրման պայմանները, մարման ժամկետները, պայմանները և վճարման կարգը

- 2.1. Վարկը տրամադրում է առավելագույնը 5 (հինգ) տարի ժամկետով:
- 2.2. Վարկը տրամադրվում է 2 (երկու) տարի արտոնյալ ժամկետով, որի ընթացքում Վարկառուին հնարավորություն է տրվում մարելու միայն վարկի գծով կուտակված տոկոսագումարները: Արտոնյալ ժամկետի ավարտից հետո կատարվում է թե՛ Վարկի մայր գումարի, թե՛ տոկոսագումարների մարում՝ համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը կազմող [հավելված 1-ով սահմանված] մարման ժամանակացույցի:

- 2.3. Վարկառուն պարտավորվում է Պահանջի մարմանն ուղղված ցանկացած վճարում ուղղել բացառապես Պայմանագրով սահմանված Վարկառուի պարտավորությունների կատարմանը:
- 2.4. Կառավարությունն իրավունք ունի ցանկացած ժամանակ պահանջել Վարկառուին տրամադրել տեղեկատվություն Պահանջի մարմանն ուղղված վճարումներ ստանացած լինելու մասին, իսկ Վարկառուն պարտավորվում է Կառավարության կողմից նման տեղեկատվության պահանջ ստացած լինելու դեպքում ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ քան նման պահանջ ստանալուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել պահանջված տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվությունը հիմնավորող փաստաթղթերը (այդ թվում՝ համապատասխան ժամանակի համար Վարկառուի բանկային հաշիվների քաղվածքները կամ Բանկից ստացված համարժեք տեղեկանք, որն արտացոլում է Կառավարության կողմից պահանջված տեղեկատվությունը):
- 2.5. Այն դեպքում, երբ (i) Կառավարությունը Վարկառուից կամ երրորդ անձանցից ստացել է տեղեկատվություն այն մասին, որ Վարկառուն Պահանջի մարման համար ստացած գումարները կամ դրանց մի մասը օգտագործել է այլ նպատակով քան Վարկի գումարի և տոկոսագումարի վերադարձը, և/կամ (ii) Վարկառուն Պայմանագրի 2.4 կետով սահմանված կարգով Կառավարությանը չի ներկայացրել պահանջված տեղեկատվությունը և հիմնավորող փաստաթղթերը, և/կամ (iii) Վարկառուն Պայմանագրով տվել է ոչ հավաստի կամ անհիմն երաշխիքներ, և/կամ (iv) Վարկառուն խախտել է Պահանջի բավարարման համար հնարավոր ողջամիտ միջոցների ձեռնարկման պարտավորությունը, (v) համապատասխան դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի կողմից (ում ընդդատյա կլինի նման պահանջի քննությունը) չի հաստատվել Պահանջի առկայությունը կամ հաստատվել է մասնակի, (vi) Վարկառուն խախտել է Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Կառավարությունն իրավունք ունի պահանջել Վարկառուին Վարկի գումարը և տոկոսագումարները, ինչպես նաև Պայմանագրով սահմանված տուգանքները վերադարձնել կառավարությանը անմիջապես:
- 2.6. Պայմանագրի 2.5 կետով սահմանված հիմքերից ցանկացածի վրա հասնելու դեպքում Վարկառուն պարտավորվում է Կառավարությանը վճարել Պայմանագրի խախտման համար տուգանք՝ տուգանքի վճարման պահին տեղաբաշխված պետական երկարաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքի 1,5 (մեկ ամբողջ հինգ

տասնորդական) տոկոսի չափով տարեկան տոկոսադրույք, սակայն ոչ ավելի քան Վարկի գումարը:

- 2.7. Պայմանագրի անբաժանելի մասը կազմող [հավելված 1-ով սահմանված] վարկի մարման ժամանակացույցի ժամկետից մինչև 90 օր ուշացնելու դեպքում ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար վարկառուից գանձվում է տույժ՝ ժամկետային չմարված վարկի գումարի 0,1 տոկոսի չափով: Վարկի հիմնական գումարի մարումը վարկային պայմանագրով նախատեսված ժամկետից ուշացնելու 91-րդ օրվանից սկսած ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար Վարկառուից գանձվում է տույժ՝ ժամանակին չվճարված գումարի 0,3 տոկոսի չափով:
- 2.8. Վարկը տրամադրվում է Վարկառուին վերջինիս՝ Պայմանագրում նշված բանկային հաշվին փոխանցում կատարելու միջոցով:
- 2.9. Պայմանագրի համաձայն Վարկի և տոկոսագումարի մարումը (վերադարձը) իրականացվում է հետևյալ [զանձապետական հաշվեհամարին] փոխանցում կատարելու միջոցով:
- 2.10. Պայմանագրով նախատեսված դրամական պարտավորությունները կատարելու համար վճարված գումարի անբավարարության դեպքում առաջինը փոխհատուցվում են վարկի գումարի բռնագանձման համար Կառավարության կրած ծախսերը (այդ թվում դատական ծախսերը, փաստաբանական և խորհրդատվական ծառայությունների ստացման համար կրած ծախսերը ամբողջությամբ), երկրորդը վճարվում է Պայմանագրով սահմանված տուգանքը, երրորդը մարվում է Պայմանագրով սահմանված տարեկան տոկոսադրույքը, չորրորդը՝ Վարկի գումարը:

### **3. Վարկառուի երաշխիքները և հավաստումները**

- 3.1. Վարկառուն երաշխավորում, հաստատում և հավաստում է, որ Պայմանագրի կնքման պահին.
  - 3.1.1. Չի ստացել Պահանջի լրիվ կամ մասնակի վճարում Կորսան-Կորվիան Ընկերությունից կամ ցանկացած այլ երրորդ անձանցից:
  - 3.1.2. Պահանջը չի զիջվել, փոխանցվել, գրավադրվել կամ տրվել ի ապահովումն այլ պարտավորությունների:
  - 3.1.3. Վարկառուի ունեցած տեղեկությունների համաձայն Պահանջը հիմնավոր և իրավաչափ է, Կորսան-Կորվիան ընկերության կողմից հաստատվել և ընդունվել է Պահանջի չափը, բացակայում են Պահանջը դրա հիմքում ընկած փաստերը

և հիմնավորող փաստաթղթերը վիճարկելու իրավաչափ հիմքեր, Կորսան-Կորվիան ընկերությունը չունի պահանջի վիճարկման մասին պահանջներ, հակընդդեմ պահանջներ, հաշվանցի պահանջներ ներկայացնելու իրավունք և բացակայում են նման պահանջների ներկայացման համար իրավաչափ հիմքերը,

3.1.4. Պահանջի հիմքում ընկած փաստաթղթերը վավեր են և առկա չէ որևէ իրավաչափ հիմք նշված փաստաթղթերի վիճարկման համար:

3.1.5. Վարկառուին պատշաճ կարգով իրականացրել է Պահանջի հիմքում ընկած պայմանագրային պարտավորությունները, այդ թվում (կիրառելիության դեպքում) իրականացրել է Պահանջի հիմքում ընկած աշխատանքներ իրականացնելու պահանջները ամբողջ ծավալով, Վարկառուին չի իրականացրել որևէ գործողություն կամ ցուցաբերել անգործություն, չի ունեցել որևէ իրավահարաբերություններ Կորսան-Կորվիան ընկերության կամ դրա փոխկապակցված անձանց հետ, որոնք կարող են հանգեցնել Պահանջի բավարարման արդյունքում ավելի քիչ փոխհատուցման ստացման կամ վատթարացնել Կառավարության՝ Պայմանագրով սահմանված իրավունքները իրացնելու հնարավորությունը,

3.1.6. Առկա չէ ցանկացած այլ իրավաչափ հիմք, որը կարող է ազդեցություն ունենալ Կառավարության կողմից Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավունքների ամբողջությամբ և պատշաճ իրացման համար:

#### **4. Վարկառուի պարտավորությունները Պահանջի վերաբերյալ**

4.1. Վարկառուին պարտավորվում է ձեռնարկել բոլոր ողջամիտ միջոցները Կորսան-Կորվիան ընկերությունից Պահանջի բավարարում ստանալու համար, այդ թվում՝ ողջամտության սահմաններում դատական կամ արտադատական կարգով ներկայացնել պահանջներ ցանկացած դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի, որին ընդդատյա կլինի նման պահանջը:

4.2. Կառավարությունն իրավունք ունի աջակցություն ապահովել Վարկառուին Պահանջի բավարարում ստանալու համար (այդ թվում՝ Վարկառուի հաշվին): Կառավարության կողմից նման աջակցություն տրամադրելու դեպքում, Վարկառուին պարտավորվում է հետևել Կառավարության ցուցումներին և խորհուրդներին: Տարակարծությունից խուսափելու համար, կողմերը արձանագրում են, որ սույն կետով սահմանված աջակցություն ցուցաբերելը Կառավարության իրավունքն է: Սույն իրավունքը

չիրացնելը չի կարող որևէ կերպով մեկնաբանվել որպես Վարկառուի որևէ պարտավորության ազատում կամ ներում:

4.3. Վարկառուն պարտավորվում է ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններից, որոնք

4.3.1. Ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են հանգեցնել Պահանջի, դրանից բխող իրավունքների, պահանջի դիմաց ստացված միջոցների գրավադրում, որպես ապահովված իրավունքի առարկա տրամադրում, զիջում, փոխանցում, հաշվանցում, նվազեցում,

4.3.2. Ուղղակիորեն կամ անուղղակիորեն կարող են իրավաչափ հիմքեր ստեղծել Պահանջը, դրա հիմքում ընկած փաստերը, հիմնավորող փաստաթղթերը վիճարկելու համար, իրավաչափ հիմքեր ստեղծել Կորսան-Կորվիման ընկերության կողմից վիճարկման պահանջներ կամ Պահանջի հետ կապված ցանկացած այլ պահանջներ ներկայացնելու համար:

## 5. Պարտավորությունների վաղաժամկետ կատարում

5.1. Կառավարությունը, սեփական հայեցողությամբ իրավունք ունի Վարկառուից պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում, եթե Վարկառուն չի իրականացրել կամ ոչ պատշաճ կարգով է իրականացրել Պայմանագրով սահմանված վճարումները:

5.2. Վարկառուն իրավունք ունի ցանկացած ժամանակ վաղաժամկետ կատարել Պայմանագրով սահմանված պարտավորությունները:

5.3. «Կորսան-Կորվիման ընկերության կողմից Վարկառուի առջև ստանձնած պարտավորությունների կատարման դեպքում՝ Վարկառուն իրավունք ունի Վարկառուից պահանջել ամբողջությամբ կամ մասնակի վաղաժամկետ կատարել վարկային պարտավորությունները՝ Կորսան-Կորվիման ընկերության կողմից կատարված վճարումների չափին համապատասխան

## 6. Եզրափակիչ դրույթներ

6.1. Պայմանագիրը պարտադիր է Կողմերի, ինչպես նաև նրանց իրավահաջորդների համար: Պայմանագիրը գործելու է մինչև դրանով սահմանված բոլոր պարտավորությունների կատարումն ամբողջ ծավալով:

6.2. Պայմանագրի որևէ դրույթ անվավերություն չի հանգեցնում Պայմանագրի մնացած մասի և Պայմանագրի անվավերությանը, պայմանով, որ Պայմանագիրը կարող էր կնքված լինել առանց անվավեր ճանաչված այդ դրույթի: Այդպիսի անվավեր

դրույթը պետք է փոխարինվի այլ իրավաբանորեն հնարավոր այնպիսի դրույթով, որը արտացոլում է կողմերի կամքը:

- 6.3. Պայմանագրի կնքման և դրա կատարումից բխող բոլոր ծախսերը, այդ թվում Գրավի գնահատման և գրավի պայմանագրի գրանցման համար ենթակա ծախսերը, կատարվում են Վարկառուի միջոցով և վերջինիս հաշվին:
- 6.4. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
- 6.5. Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:
- 6.6. Պայմանագիրը պարունակում է Կողմերի միջև հաստատված, Պայմանագրի առարկային վերաբերող ամբողջական համաձայնությունը: Կողմերը համաձայնում են, որ գոյություն չունեն այլ հայտարարություններ, երաշխավորագրեր, պայմաններ, երաշխիքներ կամ փոխադարձ համաձայնություններ, բացի նրանցից, որոնք նշված են Պայմանագրում:

## **7. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 9-ի N 727 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ  
ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

| Ծրագրային դասիչը | Ծրագրի անվանումը              | Ցուցանիշների փոփոխությունը<br>(նվազեցումները նշված են փակագծերում) |
|------------------|-------------------------------|--------------------------------------------------------------------|
|                  |                               | գումարը<br>(հազ. դրամ)                                             |
| Ընդամենը         |                               | (2,206,136.4)                                                      |
| 1049             | Ճանապարհային ցանցի բարելավում | (2,206,136.4)                                                      |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019  
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Ծրագրային դասիչը |             | Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները                                                     | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով,<br>իսկ նվազեցումները՝ փակագծերում) |                      |                      |
|------------------|-------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------|----------------------|----------------------|
| ծրագիրը          | միջոցառումը |                                                                                                                               | առաջին<br>կիսամյակ                                                                                      | ինն ամիս             | տարի                 |
|                  |             | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                                               | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
|                  |             | <b>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</b>                                                           | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
| 1049             |             | <i>Ծրագրի անվանումը՝</i>                                                                                                      | (1,849,000.0)                                                                                           | (2,206,136.4)        | (2,206,136.4)        |
|                  |             | Ճանապարհային ցանցի բարելավում                                                                                                 |                                                                                                         |                      |                      |
|                  |             | <i>Ծրագրի նպատակը՝</i>                                                                                                        |                                                                                                         |                      |                      |
|                  |             | Ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության ապահովում                                                                |                                                                                                         |                      |                      |
|                  |             | <i>Վերջնական արդյունքի նկարագրությունը՝</i>                                                                                   |                                                                                                         |                      |                      |
|                  |             | Ճանապարհների ծածկի որակի և փոխադրումների արդյունավետության բարելավում՝ ճանապարհների վիճակով պայմանավորված պատահարների նվազում |                                                                                                         |                      |                      |

| Ծրագրի միջոցառումներ |       |                                                                                                                 |               |               |               |
|----------------------|-------|-----------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|---------------|---------------|
| 1139                 | 21009 | <i>Միջոցառման անվանումը՝</i>                                                                                    | (1,272,000.0) | (1,272,000.0) | (1,272,000.0) |
|                      |       | Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր, Տրանշ 3 |               |               |               |
|                      |       | <i>Միջոցառման նկարագրությունը՝</i>                                                                              |               |               |               |
|                      |       | Լանջիկ-Գյումրի 27.47 կմ երկարությամբ ճանապարհային հատվածի կառուցում                                             |               |               |               |
|                      |       | <i>Միջոցառման տեսակը</i>                                                                                        |               |               |               |
|                      |       | Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներ                                  |               |               |               |
|                      | 21011 | <i>Միջոցառման անվանումը՝</i>                                                                                    | (577,000.0)   | (934,136.4)   | (934,136.4)   |
|                      |       | Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր՝ Տրանշ 3      |               |               |               |
|                      |       | <i>Միջոցառման նկարագրությունը՝</i>                                                                              |               |               |               |
|                      |       | Հատված Թալին-Լանջիկ 71+500 կմ-90+200 կմ կառուցման շինարարական աշխատանքներ                                       |               |               |               |
|                      |       | <i>Միջոցառման տեսակը</i>                                                                                        |               |               |               |
|                      |       | Հանրության կողմից անմիջականորեն օգտագործվող ակտիվների հետ կապված միջոցառումներ                                  |               |               |               |
|                      |       | <b>ՀՀ կառավարություն</b>                                                                                        | -             | -             | -             |
| 1139                 |       | <i>Ծրագրի անվանումը՝</i>                                                                                        | -             | -             | -             |
|                      |       | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ                                                                               |               |               |               |
|                      |       | <i>Ծրագրի նպատակը՝</i>                                                                                          |               |               |               |
|                      |       | Պետական բյուջեում չկանխատեսված՝ ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ծախսերի ֆինանսավորման ապահովում    |               |               |               |
|                      |       | <i>Վերջնական արդյունքի նկարագրությունը՝</i>                                                                     |               |               |               |
|                      |       | Պահուստային ֆոնդի կառավարման արդյունավետության և թափանցիկության ապահովում                                       |               |               |               |

| Ծրագրի միջոցառումներ |       |                                                                                                                                                                                    |             |             |             |
|----------------------|-------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------|-------------|-------------|
|                      | 11001 | <i>Միջոցառման անվանումը՝</i>                                                                                                                                                       | 1,849,000.0 | 2,206,136.4 | 2,206,136.4 |
|                      |       | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ                                                                                                                                                  |             |             |             |
|                      |       | <i>Միջոցառման նկարագրությունը՝</i>                                                                                                                                                 |             |             |             |
|                      |       | ՀՀ պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման ապահովում |             |             |             |
|                      |       | <i>Միջոցառման տեսակը</i>                                                                                                                                                           |             |             |             |
|                      |       | Ծառայությունների մատուցում                                                                                                                                                         |             |             |             |

|  |       |                                                                                                                                                                                    |               |               |               |
|--|-------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------|---------------|---------------|
|  | 11001 | <i>Միջոցառման անվանումը՝</i>                                                                                                                                                       | (1,849,000.0) | (2,206,136.4) | (2,206,136.4) |
|  |       | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ                                                                                                                                                  |               |               |               |
|  |       | <i>Միջոցառման նկարագրությունը՝</i>                                                                                                                                                 |               |               |               |
|  |       | ՀՀ պետական բյուջեում նախատեսված ելքերի լրացուցիչ ֆինանսավորման, պետական բյուջեում չկանխատեսված ելքերի, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման ելքերի ֆինանսավորման ապահովում |               |               |               |
|  |       | <i>Միջոցառման տեսակը</i>                                                                                                                                                           |               |               |               |
|  |       | Ծառայությունների մատուցում                                                                                                                                                         |               |               |               |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 9-ի N 727 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի  
N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի և միջոցառումների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը<br>(նվազեցումները նշված են փակագծերում) |                      |                      |
|---------------------------------------------------------------------------|--------------------------------------------------------------------|----------------------|----------------------|
|                                                                           | առաջին<br>կիսամյակ                                                 | ինն ամիս             | տարի                 |
| <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                           | <b>(1,849,000.0)</b>                                               | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
| այդ թվում՝                                                                |                                                                    |                      |                      |
| <b>Ա.Ներքին աղբյուրներ-ընդամենը</b>                                       | <b>(1,849,000.0)</b>                                               | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
| այդ թվում՝                                                                |                                                                    |                      |                      |
| <b>2. Ֆինանսական գուտ ակտիվներ</b>                                        | <b>(1,849,000.0)</b>                                               | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
| այդ թվում՝                                                                |                                                                    |                      |                      |
| <b>2.4. Վարկերի և փոխառվածությունների տրամադրում</b>                      | <b>(1,849,000.0)</b>                                               | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1.1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի  
N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 2 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄԸ

| Ծրագրային դասիչը                                                        |             | Բյուջետային գլխավոր կարգադրիչների, ծրագրերի<br>և միջոցառումների անվանումները                                                                                                                                                                                                                                                                   | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական<br>նշանով) |                    |                    |
|-------------------------------------------------------------------------|-------------|------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------|--------------------|--------------------|
| ծրագիրը                                                                 | միջոցառումը |                                                                                                                                                                                                                                                                                                                                                | առաջին<br>կիսամյակ                                                      | ինն ամիս           | գումարը            |
|                                                                         |             | <b>ԸՆԴԱՄԵՆԸ<br/>այդ թվում՝</b>                                                                                                                                                                                                                                                                                                                 | <b>1,849,000.0</b>                                                      | <b>2,206,136.4</b> | <b>2,206,136.4</b> |
| <b>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների<br/>նախարարություն</b> |             |                                                                                                                                                                                                                                                                                                                                                |                                                                         |                    |                    |
| 1049                                                                    |             | <i>Ծրագրի անվանումը՝</i><br>Ճանապարհային ցանցի բարելավում<br><i>Ծրագրի նպատակը՝</i><br>Ճանապարհային ցանցի բարելավում և անվտանգ երթևեկության<br>ապահովում<br><i>Վերջնական արդյունքի նկարագրությունը՝</i><br>Ճանապարհների ծածկի որակի և փոխադրումների<br>արդյունավետության բարելավում՝ ճանապարհների վիճակով<br>պայմանավորված պատահարների նվազում | 1,849,000.0                                                             | 2,206,136.4        | 2,206,136.4        |

| Ֆինանսական ակտիվների կառավարման միջոցառումներ |       |                                                                                                                                                                                                                                                                                                                                             |             |             |             |
|-----------------------------------------------|-------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------|-------------|-------------|
|                                               | 42001 | <p><b>Միջոցառման անվանումը՝</b><br/>«Կորսան Կորվիամ Կոնստրուկտիոն» ԲԸ-ի կողմից չվճարված դրամական պահանջներ ունեցող ՀՀ կազմակերպություններին տրամադրվող բյուջետային վարկեր</p> <p><b>Միջոցառման նկարագրությունը՝</b><br/>Բյուջետային վարկերի տրամադրում ՀՀ կազմակերպություններին</p> <p><b>Միջոցառման տեսակը՝</b><br/>Վարկերի տրամադրում</p> | 1,849,000.0 | 2,206,136.4 | 2,206,136.4 |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Հավելված N 7  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 9-ի N 727 - Ն որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ  
N 3 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 3.1.1.1.1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ  
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 5 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Ծրագրային<br>դասիչը |             | Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն<br>ու դրանց տարրերի անվանումները                                                         | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական<br>նշանով) |                    |                    |
|---------------------|-------------|---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------|--------------------|--------------------|
| ծրագիրը             | սիջոցառումը |                                                                                                                                             | առաջին<br>կիսամյակ                                                      | ինն ամիս           | տարի               |
|                     |             | <b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>                                                                                                                             | <b>1,849,000.0</b>                                                      | <b>2,206,136.4</b> | <b>2,206,136.4</b> |
|                     |             | <i>այդ թվում՝</i>                                                                                                                           |                                                                         |                    |                    |
|                     |             | <i>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների<br/>նախարարություն</i>                                                                     | 1,849,000.0                                                             | 2,206,136.4        | 2,206,136.4        |
| 1049                |             | <b>Ճանապարհային ցանցի բարելավում</b>                                                                                                        | <b>1,849,000.0</b>                                                      | <b>2,206,136.4</b> | <b>2,206,136.4</b> |
|                     | 42001       | «Կորսան Կորվիան Կոնստրուկսիոն» ԲԸ-ի կողմից չվճարված դրամական<br>պահանջներ ունեցող ՀՀ կազմակերպություններին տրամադրվող<br>բյուջետային վարկեր | 1,849,000.0                                                             | 2,206,136.4        | 2,206,136.4        |
|                     |             | այդ թվում՝ ըստ կատարողների                                                                                                                  |                                                                         |                    |                    |

|  |                                                                                    |                    |                    |                    |
|--|------------------------------------------------------------------------------------|--------------------|--------------------|--------------------|
|  | <i>ՀՀ ֆինանսների նախարարություն</i>                                                | <i>1,849,000.0</i> | <i>2,206,136.4</i> | <i>2,206,136.4</i> |
|  | այդ թվում՝ ըստ տնտեսագիտական դասակարգման հոդվածների՝                               |                    |                    |                    |
|  | ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՄԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ, այդ թվում՝ | 1,849,000.0        | 2,206,136.4        | 2,206,136.4        |
|  | ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, այդ թվում                                         | 1,849,000.0        | 2,206,136.4        | 2,206,136.4        |
|  | ՆԵՐՔԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ, այդ թվում                                  | 1,849,000.0        | 2,206,136.4        | 2,206,136.4        |
|  | Ներքին վարկեր և փոխառվածքներ                                                       | 1,849,000.0        | 2,206,136.4        | 2,206,136.4        |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ  
ՂԵԿԱՎԱՐ

Է. ԱՂԱԶԱՆՅԱՆ

Հավելված N 8  
ՀՀ կառավարության 2020 թվականի  
ապրիլի 9-ի N 727 - Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ  
NN 3 ԵՎ 4 ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(հազ. դրամ)

| Գործառական դասիչը |           |           | Ծրագրային դասիչը |            | Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, բյուջետային ծրագրերի միջոցառումների, բյուջետային հատկացումների գլխավոր կարգադրիչների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը<br>(ավելացումները նշված են դրական նշանով,<br>խսկ նվազեցումները՝ փակագծերում) |                      |                      |
|-------------------|-----------|-----------|------------------|------------|--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------------------------------------------------------------------------------------------------------|----------------------|----------------------|
| Ընդհանուր         | Խումբ     | Դաս       | Ծրագիր           | Միջոցառում |                                                                                                                                                                          | առաջին կիսամյակ                                                                                         | ինն ամիս             | տարի                 |
|                   |           |           |                  |            | <b>ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ</b>                                                                                                                                                   | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
| <b>04</b>         |           |           |                  |            | <b>ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>                                                                                                                                       | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
|                   |           |           |                  |            | այդ թվում՝                                                                                                                                                               |                                                                                                         |                      |                      |
|                   | <b>05</b> |           |                  |            | <b>Տրանսպորտ</b>                                                                                                                                                         | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
|                   |           |           |                  |            | այդ թվում՝                                                                                                                                                               |                                                                                                         |                      |                      |
|                   |           | <b>01</b> |                  |            | <b>Ճանապարհային տրանսպորտ</b>                                                                                                                                            | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
|                   |           |           |                  |            | այդ թվում՝                                                                                                                                                               |                                                                                                         |                      |                      |
|                   |           |           |                  |            | <b>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</b>                                                                                                      | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |
|                   |           |           |                  |            | այդ թվում՝                                                                                                                                                               |                                                                                                         |                      |                      |
|                   |           |           | <b>1049</b>      |            | <b>Ճանապարհային ցանցի բարելավում</b>                                                                                                                                     | <b>(1,849,000.0)</b>                                                                                    | <b>(2,206,136.4)</b> | <b>(2,206,136.4)</b> |

|  |  |  |  |       |                                                                                                                        |                      |                      |                      |
|--|--|--|--|-------|------------------------------------------------------------------------------------------------------------------------|----------------------|----------------------|----------------------|
|  |  |  |  |       | այդ թվում՝                                                                                                             |                      |                      |                      |
|  |  |  |  | 21009 | <b>Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր, Տրանշ 3</b> | <b>(1,272,000.0)</b> | <b>(1,272,000.0)</b> | <b>(1,272,000.0)</b> |
|  |  |  |  |       | այդ թվում՝ ըստ կատարողների                                                                                             |                      |                      |                      |
|  |  |  |  |       | <i>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</i>                                                    | <i>(1,272,000.0)</i> | <i>(1,272,000.0)</i> | <i>(1,272,000.0)</i> |
|  |  |  |  |       | այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ                                                     |                      |                      |                      |
|  |  |  |  |       | - Շենքերի և շինությունների շինարարություն                                                                              | <i>(1,272,000.0)</i> | <i>(1,272,000.0)</i> | <i>(1,272,000.0)</i> |
|  |  |  |  | 21011 | <b>Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի զարգացման վարկային ծրագիր՝ Տրանշ 3</b>      | <b>(577,000.0)</b>   | <b>(934,136.4)</b>   | <b>(934,136.4)</b>   |
|  |  |  |  |       | այդ թվում՝ ըստ կատարողների                                                                                             |                      |                      |                      |
|  |  |  |  |       | <i>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն</i>                                                    | <i>(577,000.0)</i>   | <i>(934,136.4)</i>   | <i>(934,136.4)</i>   |
|  |  |  |  |       | այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածներ                                                     |                      |                      |                      |
